




ՀՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 146


9 ՄԱՅԻՍ 1914

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԴԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ

ՏՕՆԱՑՈՅՑ



Մայիս 10	†	Կիր.	գձ.	Ե. Տօն Երեւման հաշին :
11	Բշ.	գկ.	Լ.	or Յինանց :
12	Դշ.	դձ.	ԼԱ.	or Յինանց :
13	Դշ.	դկ.	ԼԲ.	or Յինանց :
14	Եշ.	ւձ.	ԼԳ.	or Յինանց :
15	Ուր.	ւկ.	ԼԴ.	or Յինանց :
16	Շք.	քձ.	ԼԵ.	or Յինանց :



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԲԱԹԱԹ-ԱԹ-ԵՐԹ

Զորքող սարի 9 Մայիս 1914 թիւ 146

«Մերազան Քահանայապետն Պիոս Ժ. կը մաղթէ որ Կաթողիկէ Արձագանգ շաբաթաբերքը շա-
բաթաբերքը Կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կա-
թողիկէ, ի բարգաւաճանս կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար
Մերազան Հայրն սրտազին կ'օրհնէ յիշեալ Շաբաթաբերքը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:
Նամակ Կարգ. Մերի տէր Վախի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս ԺԴ. Թեոքեմ, Հայ Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ
23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 քուսմամբաւ:

ԴԵՊՔԵՐ ԵՒ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՆԿՈՒՄ

ԵՒ

ՄԵՐԻ ՀԻՒԱՆԳՈՒԹԻՒՆՆԵՐ

Գ. (*)

(Շար.)

Սրբազան Քահանայապետն Պիոս Ժ. և
եպիսկոպոսունք՝ իրենց աջակից ունենալով
հմուտ կանոնադէտներ ու աստուածաբաններ՝
ամէն միջոց ձեռք առած էին որպէս զի Եկե-
ղեցւոյ թշնամիք զինաթափ լինին, և Վա-
սիկանու ժողովին հեղինակութիւնն ո՛ր և է
կերպիւ չտկարանայ և տարակոյսի չենթար-
կուի բնաւ: Ու այսօր, — գրեթէ կէս դար

վերջը, — կը տեսնենք պայծառօրէն թէ լոկ
սուտերով և խեղաթիւրմամբ կարելի է կռուիլ
այդ պատկառելի ժողովոյն դէմ. գիտութիւն,
ճշմարտութիւն և ուղղամտութիւն կը խո-
նարհին անոր առջեւ յարգանք ու զայն կը
հռչակեն ստուգիւ սուրբ և տիեզերական:
Տէօլիկէրներ ու Յակինթոսներ ի զո՛ւր ար-
ձակեցին բարկութեան ու ատելութեան ա-
ղաղակներ, իմաստասէրք և աստուածաբանք,
քահանայք և եպիսկոպոսք յաղթականօրէն
պատասխանեցին ամէն առարկութեանց, և
լոյս սփռեցին առատօրէն՝ ամենէն կարեւոր
և դժուարալոյծ նիւթերու վրայ:

Անգլիոյ գերահռչակ եպիսկոպոսը, ծնըն-
դեամբ բողոքական ու ապագայ Միջանաւոր,
Մաննինկ՝ համառօտ այլ սքանչելի գրքոյով
մը կը ցրուէ թիւրիմացութեանց ու նախա-
պաշարմանց ամպերն սեւթոյր՝ որ կը սպառ-
նային միազնեւ սաքսոն ողջմտութեան հո-

(*) Տես թիւ 144. էջ 237.

րիզոնն սլայծառ, և ցոյց կուտայ քաղաքակիրթ աշխարհի՝ անսխալութեան արեւն իւր բոլոր շքեղութեան ու կենսապարգեւ ջերմութեան մէջ⁽¹⁾։

Մալինի սրբաշունչ Արքեպ. Եւ Երջան, կրօնաւոր Միաբանութենէն Ամենասուրբ Փրկչին և ապագայ ծիրանաւոր, կը վանէ հին ու նոր յարձակումներն ու կը հաստատէ անհերքելի կերպիւ Եկեղեցւոյ դարաւոր սկզբունքներն ու վարդապետութիւնն։ Եւ երկասիրութիւն մը զոր գրած է տասնեւիններորդ դարու ամենէն մաքուր ու բարձր հոգիներէն մին, և զոր կը փութանք յանձնարարել կրօնասէր և ընթերցասէր Հայու-թեան²։

Սուլէմի Բենետիկտեանց Աբբայն, Տոն Կէ-ռանժէ, քաջահմուտ՝ ամեն պատմական, ծիսական ու վարդապետական խնդրոց, կը պատասխանէ Մօնս. Մարէի, Հայր Կրադրիի և այլոց, և ուր կը գտնէ մոլորութիւն մը՝ կը փշրէ դաշն իսկոյն, և կը կանգնէ ամենուրեք ճշմարտութեան և ուղղափառութեան կոթողն անկործանելի³։

Կորովամիտ ու բարեպաշտ իմաստասէր մը, Պարոն Ամէտէ տը Մարժըրի կը պարզէ իւր համոզումներն հրապարակաւ, կը պաշտպանէ Հաւատոյ և Բանականութեան սկզբունքներն անջնջելի, կը պատասխանէ յարգալիր համարձակութեամբ մեծանուն ահադիմականին՝ Հայր Կրձորիի, որ հակառակ իւր մտաւորական փայլուն ձիւղերուն և դերասքանի ձծին, չէր պատրաստուած բնաւ Անտիալութեան մանրամասնութիւնները դատելու, և որ չարունակ խնդրոյն շուրջ կը թափառէր մոլորահետ՝ առանց անոր ոգւոյն և ինկութեան թափանցելու⁴։

¹ The œcumenical Council and the Infallibility of the Roman Pontif. by H. Edward, archbishop of Westminster.

² L'Infaillibilité et le Concile Générale, par Mgr. Dechamps, arch. de Maline, 9me. édition.

³ De la Monarchie pontificale à propos du livre de Mgr. Maret, տես նաև Réponse aux dernières objections contre la définition de l'Infaillibilité du Pontife Romain, par le R. P. dom Prosper Guéranger, abbé de Solesmn.

⁴ Lettres au R. P. Gratry, par Amédée de Margerie, prof. de Philosophie à la faculté des Lettres de Nancy.

Տասնեւիններորդ դարու առաջին հրապարակագիրը, մեծատաղանդն Լուի Վէյդե, որ ի Հռոմ կը գտնուէր նոյն ատեն, Ս. Ժողովոյն դէմ արձակուած թուեաւոր նետերը քաջութեամբ և ճարտարութեամբ կը դարձնէր հակառակորդաց պիտոյն, և ժողովական Հարց պատուոյն ու համբաւին անձնանուէր ջատագով կը հանդիսանար մինչև. ցվեր¹։

Եւ դեռ ինչպիսի՜ անուններ և ո՞րչափ օգտաշատ երկեր կրնայինք յիշել. ուր ընթերցողը կը տեսնէ և կը համոզուի թէ՛ Քրիստոսի Եկեղեցին սուտի, «Մուրացածոյ քուէ-ներու», անարժան պաշտպաններու պէտք չունի իւր յաղթական ընթացքը շարունակելու համար դարերու ընդմէջ. իւր զրօշը բարձր բռնած են միշտ մաքուր ձեռքեր անշահախնդրութեամբ և անձին զոհողութեամբ։ Տգիտութիւն և նուաստութիւն ձեռք ձեռքի տուած թող խեղաթիւրեն՝ որչափ կ'ուզեն՝ անսխալութեան երկնային վարդապետութիւնն, ու թող ջանաւ ծաղրելի ընել զայն յաչո անմոտից ու իմաստակաց։ Հին ու նոր աշխարհներն, արձագանդ Վատիկանու պատգամին, կը գոչեն միաշունչ Լոնտոնի հեղինակին հետ. «Տրամաբանական ու պատմական վարդապետութիւն մըն է այն. It is a logical and historical doctrine.²»։

*
**

Բայց քննենք թէ ինչո՞ւ այդչափ կիրք ու կատաղութիւն Անտիալութեան դէմ կամ ճշմարտութիւն է այն կամ վրիպանք։ Եթէ ճշմարտութիւն, ինչո՞ւ հակառակիլ անոր, ինչո՞ւ բարկանալ, ինչո՞ւ յոտից ցզլուխ սուտերով զինուած՝ մարանչիլ անոր դէմ։ Այսպիսի ճիգերով ի՞նչ կը չահինք մենք, և ի՞նչ կը կորսնցնէ ճշմարտութիւնն. ի՞նչ պիտի վատ արուեստ, ո՞րչափ անպատիւ կոչու՞մ լինել թշնամի և ատեցող ճշմարտին։ Ու այս ո՞չ ապաքէն աստուածամարտ լինել է, քանի որ գոչեց բարութիւնն և իմաստութիւնն մարմնացեալ. «ԵՍ ԵՄ ՃՇՄԱՐ»։

¹ Rome pendant le Concile, par L. Veuillot.

² The Pope and the Church considered in their mutual relations, by the Rev. Paul Bottalla, London.

ՏՈՒԹԻՒՆ»։ Ո՞վ է որ մարդկութեան մէջ
կը կատարէ ստատանին դերն ամենէն աւելի,
— նա անշուշտ որ կամաւորապէս և յա-
մառօրէն կը մաքառի ճշմարտութեան դէմ։
Ըսէ՛ք ինձ, մարդ մը կրնա՞յ իջնել բարոյա-
պէս աւելի վա՛ր Աստուծոյ և իւր նմանեաց
առջեւ։ Ստոյ յաղթանակն նոյն իսկ այս
աշխարհի մէջ տեսական չէ, և ո՛չ իս իրա-
կան։ Կը թուի յաղթել, այլ պարտուած է
միշտ։ Ու ի՞նչ ըսել գերեզմանէն անդին,
հոն ուր կը փայլի մշտաշողջող ճշմարտու-
թեան արեւն անամպ ու անստուեր, հոն
ուր մեր բոլոր ճարտարամտութիւնք, հնարք
և շարժմունք բիւրազան՝ չեն զօրեք յարու-
ցանել ամենադոյզն իսկ մի փոշի։ Ո՛հ, ի՞նչ-
պիսի սոսկում՝ ստիպուած լինել գոչելու
երբ այլեւս չիք դարման։ «Ուրեմն մոլորե-
ցա՛մ ի ճանապարհէ ճեմաբռնութեան»։

Բայց ենթադրենք վայրկեան մը ձեզ հետ
թէ վրիպանք լինի այն։ Ինչո՞ւ այդչափ ա-
տելութիւն, ինչո՞ւ անդու պատեալով ա-
նոր դէմ։ Աշխարհ այսօր առաւել քան եր-
բէք լի է մոլորութիւններով։ Կերեպիկոսու-
թիւնք ի փրկաստիպութեան և ի կրօնս հաշ-
ուելի չեն այլեւս։ Արիօսէ և Մանէսէ սկսեալ
մինչեւ Մորմոն, Լուազի և Մուրրի, Պիւռոնէ
և Եպիկուրէ սկսեալ մինչեւ Սրինոպա, Քանդ և
Հեկէլ՝ ո՞ր սկզբունքն է, ո՞ր ստուգութիւն,
ո՞ր ճշմարտութիւն, որ ժխտուած, մերժուած,
հալածուած չլինի։ Ո՞ր վրիպանքն է, ո՞ր
մոլորութիւն, ո՞ր անհեղեղութիւն, որ քա-
րողուած, ջատագովուած, խնկարկուած չլի-
նի։ Եւ ո՛չ այսչափ միայն, այլեւ տեսէք...
հոս վեհապետ մըն է որ ինքզինք քրիստո-
նէութեան պոռթկը կը դաւանի և աշխարհա-
կան բռնաւոր մը կը կարգէ՝ պրոկուրորի
անուան տակ՝ իրեն ներկայացուցիչ, որ կը
հրամայէ՝ յանուն կրօնի՝ հաւատացելոց, քա-
հանայից և եպիսկոպոսաց։ Կոն թագուհի
մըն է որ կը հռչակուի գերագոյն քահանա-
յապետ, և որում կը ներկայանան կրօնի ա-
մենէն փափուկ խնդիրք՝ ստանալու համար
իրենց օրինաւոր լուծումն ու վճիռ։ Այլուր
մոլեռանդ բացագանչողներու, ամենէն ստու-
րին արհեստաւորներու վոհմակ մըն է տգէտ

ու անուպայ՝ որ կը յանդգնի սրբագրել և ի
դատ կոչել Օգոստինոսներն ու Հերոնիմոս-
ներ, Լեւոններն ու Գրիգորներ, Շնորհալի-
ներն ու Պսիւէներ։ և անոնց երկնազդեցիկ
խորհրդոց, վեհաշուք վարդապետութեանց
տեղ դնել հիւանդոտ մտքի մը ցնորքներն
կատարի՝ և հակասութիւններն հրէշային։

Սակայն ո՞վ կ'ըլլաղի անոնցմով, ո՞վ կը
խօսի անոնց դէմ, ո՞վ գիշեր ու ցերեկ կը
նշաւակէ զանոնք, ո՞ւր են քարկութեան
կայծակներն անոնց դէմ։ Ո՞վ երբեք կը խան-
գարէ պատմութիւն և թուարանութիւն,
ո՞վ կ'անդամահատէ բնագիր և իրողութիւն
զանոնք հերքելու համար, ո՞վ խուցի մը
անկիւնը փոշիներու տակ հեծող անուն մը
և անպիտան լուսանկար մը իբրեւ չքնաղ
մոզայիք գրքոյկի մը ճակատը կը գետեղէ
խնամքով, և հրապարակ կ'իջնէ սոնքալով՝
անպարտելի Փիլիպպեան մը ստեղծելու յա-
ւակնութեամբ։ Ո՞վ անոնց դէմ սուտ սուտի
վրայ կը բարդէ, կեղծիք ու խաբէութիւն,
լրբութիւն և վատութիւն իրարու վրայ կը
դիզէ՝ անսուիկ ամբողջ մը կառուցանելու ե-
րազով։ Ո՞վ մաքուր և հոգեզմայլ անուն-
ներն կը թողու, և աննշան միջակութիւն-
ներով, վատանուն դէմքերով ու ամօթալի
դէպքերով հատորներ կը լեցնէ՝... ճշմար-
տութեան վրէժը լուծելու համար։ Ո՞վ պատ-
կառելի և տիեզերահռչակ եպիսկոպոսի մը
բերանն ամբողջովին յերկրուած չլինծու ա-
տենաբանութիւն մը կը դնէ, այլեւայլ լե-
զուններու կը թարգմանէ, և զայն երկըրդ
տպագրութեամբ ձրիապէս կը բաշխէ, և
նոյնն ընել կը յանձնարարէ հին ու նոր սե-
րնդոց՝ իւր ներկայ ու ապագայ ընթերցող-
ները պաճաբամիտ վայրենիներու տեղ դնե-
լով և ուշիմ Ազգի մը միտքն ու հոգին ստըր-
կացնելէ չվախնալով սրբապի՛ղծ յանդգնու-
թեամբ։ Վա՛յ ձեզ, վա՛յ ձեզ, հայ անուան
անարժան՝ եղբայրասպան կայէնիք, եթէ
չզղջաք, չփութաք քաւել ձեր այս ոճիրներն
ահաւոր, երկնից ու դարերու անէծքներն
համայն Ձեր վրայ պիտի թափին, և հայրեն-
եաց մաքուր Ոգին պիտի գարշի՛ ձեռն ան-
հրաբխ պժղանքով...։

Ահագին ամբոխ մը ամէն ազգէ և ցեղէ , ամէն լեզուէ և համոզումէ , ամբոխ մը՝ կիր- պարանեալ քրիստոնեայներու և յայտնի ան- հաւատներու , շարունակ միացած՝ համա- գունդ և համաշունչ՝ կը յարձակին մի միակ Հաստատութեան դէմ, կատաղի ու այսա- հար՝ լուսանք ի շրթունս եւ թոյն ի գրչի՝ կը մարտնչին մի միակ Կրօնի դէմ :

Դժբախտ ու բազմակարօտ ազգի մը վրայ եւեթ ակնարկ նետելով , ո՛ւր են իւր հեր- քուններն հին ու նոր մոլորութեանց դէմ , ո՛ւր են իւր ջախջախիչ պատասխաններն Սթրաուսի և Ռընանի դէմ , Պիլանէրի և Լուի Վիարաոյի դէմ , Բրուտոնի եւ Սքէն- սրրիի դէմ : Ո՛ւր են իւր կարեւոր հրատարա- կութիւններն հակաքրիստոնէութեան դէմ , համաստուածութեան , հոգեմոլութեան (spi- ritisme) , տարվինականութեան , զգայա- պաշտութեան եւ արդիականութեան դէմ , Իւր աղքատիկ գրականութեան մէջ կը վրէ- տան սակայն Հոռովի դէմ , Անսխալութեան դէմ յօրինուած մեծ ու փոքր հատորներ , լրագիրք եւ հանդէսք , թարգմանութիւնք և ինքնատիպ գրուածք ամէն գոյներով ու ամէն ճաշակներով : Ափսո՛ս , պէ՛տք է որ յաւիտեան ճշմարիտ լինի յանդիմանութիւնն Ժոզէֆ տը Մէսդրի՝ «Le premier des dogmes est la haine du Pape» :

Դացէ՛ք , գացէ՛ք , եթէ անոխալութիւնն մոլորութիւն լինէր , ջատանան զձեզ չպիտի վրդովէր այդչափ , եւ եթէ զուք անոր մէջ չնշմարէիք ճշմարտութեան յաղթանակը , չպիտի բորբոքէիք այդ աստիճան : Ինչ որ զձեզ ի բարկութիւն կը զրդէ՝ վրիպանքը չէ՛ , այլ ճշմարտութիւնը . եւ ինչ որ չէք ուզեր ներել Եկեղեցւոյ՝ իւր անարժան որդ- ւոց զեղծումները չեն , — որոնք ուրախու- թիւն կը պատճառեն ձեզի , այլ իւր անժխ- տելի առաւելութիւններն են , իւր անզու- գական մաքրութիւնն , իւր անհաւասարելի բարձրութիւնն , իւր սրբածին բեղմնաւորու- թիւնն , իւր համաշխարհային հեղինակու- թիւնն , իւր գերմարդկային դիւզազնու- թիւններն , իւր անթարշամ գեղեցկութիւնն , իւր կենսայորդ մշտածաղիկ երիտասարդու-

թիւնն , ի մի բան իւր՝ քան զլոյս արեւու պայծառ գերազանցութիւնն է մարդոց եւ Աստուծոյ առջեւ :

Զ . Ս . Յ .

31 Mars, 1914

Վ . Ե . Ջ

ՅԻՍՈՒՆ ՔՐԻՍՏՈՍ (*)

Ա . Լ . Թ . Ը . Ն . Ժ . Ը . Պ . Ա . Պ

Էվվէլֆինն ախի օլաւազ ալի պիր պիւրհան : Յիսուս Քրիստոս սեօմմէզ պիր առաքէթ : մարուզ գալաճաղընը քու էվվէլիննէն խապէր վերմիօ քիր , վէ հապիգա- քը հալթէ քալի օ առաքէթ : մարուզ գալմըօ քըր վէ հալէննէ գալմազա քըր :

Յիսուսն պիրիննի բէյլամպէրլլինտէն իսթինալ օլունան տէլիլ հէր նէ գատար ճէ- լիլ վէ գաթի իսէ տէ , պիրիննիի գատար զարիպ վէ ծոռն կիպի տէ հարֆիյէն իճ- րա օլունան իքիննի պիր բէյլամպէրլլիլ տա- հա վար տըր : Յիսուս Քրիստոս եալընըզ մէ- հապպէթ իսթէյիպ ծըը էլաէ իթմէտի , իօր- լանրլաճաղընը , թահգիր օլընաճաղընը վէ ասալէթէ մարուզ գալաճաղընը տա թա էվ- վէլինտէն խապէր վէրտի վէ հապիգաթը հալտէ տալի էօյլէ օլալ վէ հալէն տէ օլ- մադտա տըր : Պու պիր իքիննի բըօլա տըր վէ իքրար իտէրիմ քի պու հալ պէնի տահա զիյատէ շաշըրըր :

Թաթլը վէ միւսալէմէթբէրվէր պիր սա- նաաթքեար , կիւնիւն պիրինտէ մէյտանա չըպաա վէ տէսէ քի «Պէն տիւնեանըն նիհա- յէթինէ գատար թահգիր օլունաճաղըն» վէ քէնտի կիպի թաթլը վէ միւսալէմէթբէրվէր տիկէր օն իքի սանաաթքեարլար տա թօբ- լայուպ ծըլարա տա տէսէ քի «Սիզ տէ տիւն- եանըն սօնունա գատար թահգիր օլունա- ճաղընըզ» վէ տուտալլարընըն իւղէրլինտէ օլան նէճիպ վէ ալի թալիմաթը թէպլիղէն «Պու թալիմաթա գարչը տիւնեա սօնունա գատար հէվէեանլար իալիլէճէք տիլը» տէսէ :

(*) Տես թիւ 143, էջ 243 :

նիհայեթ պուռ ստնաաթքեար, հէր քէնին
գալպինին շէֆաղաթընը մուծիպ օլաճագ է-
զիյէթլէր իշինտէ էօլէ սէ, խաչընըն տախի
թահգիր օլունաճաղընը, հիտտէթլէնմէքսի-
զին ծնա պապամայան քիմէյէր պուլունա-
ճաղընը խապէր վէրսէ, պու հալ պէնիմ ագ-
լումճա անլաչըլմայաճագ պիր հալ տըր: Զիւն-
քի քէնտինի սէվտիրմէնին միւշքիլ օլտու-
ղընը անլարըմ, լաքին թահգիր օլունամանըն
տա պու գատար գօլայ օլտուղընը անլայա-
մաւ: Լաքօրտէր, Յիսուս Քրիստոս հապըն-
տա օլան մէշուր քարոզլարընը պիրինտէ
տէր քի, «Պէօլէք զաթլարտան քիմ սէ-
վիրմիշ տիր, մուճարէպէտէ, տգըլըլգտա
պուլունըպ տա մէզարընըն իւզէրինտէ քիմ
մէհապպէթ պրապմիշ տըր, վարսա պիր թա-
նէ՝ իամինի սէօլէյինիզ»: Պու սէօլէրի պէն
տէ իսթիարէ իտէրէք տէրիմ քի. թախթ
իւզէրինտէ, Ֆէլէֆէտէ պուլընըպ տա թահ-
գիր օլունան վա՛ր մը տըր, լուծֆէն պիր
պէօլէք տտէմ, պիր Ֆէլէսօֆ, պիր մէզհէպ
միւլէսսիս իամինի խապէր վէրին քի մէզա-
րընըն իւզէրինտէ զայզ ու տտալէթ թէրք
էլլէմիշ օլտուն: Շայէտ իտուզ թարաֆընտան
պաղըլարընըն իսթրէրէրինտէ պիր արսուլը
թէարիւղ սէ օլունալըսա, չօգ կէչմէտի ու-
նուտըլտը վէ տտալէթ զայլ օլտու: Զայիլ
օլմագ պիր տտալէթէ մարուզ պուլունմագ
չէրէֆի եալընը Յիսուս Քրիստոս խասս
տըր:

Յիսուս Քրիստոսըն պու սուրէթլէ թահ-
գիր օլունաճաղընը խապէր վէրմէսինի զա-
րիպ կէօլիւյօրում տա, պու կիպի պիր բէյ-
ղամպէրլին գուվվէտէն ֆիլիէ չըգմասընը
տահա զարիպ պուլույօրում: Զիւնքի Յիսուս
Քրիստոսըն նէսի խօրանըլապիլիր: Օնուն
սիմալը մը. ֆագաթ ծնուն կիւզէլլիյինէ միւ-
շապի պիր ճէմալա մայիք քիմսէ պուլըն-
մամը տըր: Աճէպա ծնուն թաղիմաթը մը,
Աւետարանը մը, Լաքին հիշ պիր քիթապըն
ծնունլա մուգայէսէսի գապիլ օլմատըղընը
սիզ տէ իգարա էտէրսինիզ, էօլլէ իսէ Յի-
սուս Քրիստոսըն նէսինի թահգիր իտիյօրը-
նըլ:

Տէյէճէքսինիզ քի, պու բէք պասիթ տիր,


պէնիմ նէֆրէթ իթտիյիմ, եալանճըլըպ տըր,
պա խուսուս պու գատար պէօլիւք պիր լօլ
օյնայան եալանճըլըպ տըր: Պէնիմ իգրահ
էթտիյիմ շէյ շու տըր քի, ծն սէքիզ ասրտան
պէրի տիւնեատէ շաշաճագ պիր ալտատը-
ճըլըգտըր տէվամ իտիյօր:

Սահի տիր քի, Յիսուս Քրիստոսըն պիր
ալտատընը օլտուղընը մուհապգագ սուրէթտէ
պիլմիշ օլայտըն, պու հիսսիյաթընը պէն
սէ անլարտըմ. ֆագաթ հիշ պիր ճիտաի քիմսէ
պու գանաաթը մուհապգագատա պուլունա-
մագ: Պունըն տա պին պիր սէպէպէրի վար-
սա տա, սուրէթը մախսուտէտէ տիւնեատա
Յիսուսըն ալլահլըղընա ինանան բէգ չօգ
միւլէէալլէմ վէ հիւսնի նիյիէթ ասապը վար
օլմասը տըր: Պօսիւէ, Բասգալ, Լայպից,
Կրօթիուս, Նիւթըն վէ ծն սէքիզ ասրարըն
քիաֆֆէյի ուլէմասը թէտրիս, թէտգըզ իթ-
ալլէր, մա մաֆիյ Քրիստոսըն գարչըսընտա
զանուզէտէ օլտուլար, ծնուն ալլահլըղընա
ինանտըլար, վէ հայաթլարը իշինտէ պու
իթիգատ ուղընա պէօլիւք ֆէտաքեարլըգ-
լարտա պուլունտըլար: Յիսուս Քրիստոսա
ինանանլար իլէ ինանմայանլարըն արա-
սընտաքի ֆարգ իշթէ պու տըր, եանի ինա-
նանլար քէնտի իմանլարը իշուն ֆէտաքեար-
լըլար եաքարլար, ինանմայանլար իսէ, հիշ
պիր ֆէտաքեարլըգտա պուլունմաղլար:

Փագաթ ֆարգ իտէլիմ քի Յիսուս Քրիս-
տոս պիր ալտատընը օլտուն, օ թագաիրտէ
պիլլիմ ծնա օլան մէհապպէթիլիզ եանլըշ,
սիզին սէ ծնա գարչը սուլտուղընըլ տտա-
վէթ տօղրու տըր: Պինաէն ալէյ, սէմէրա-
տար օլաճագ օլան, տիւնեայը թէճտիտ իտէ-
ճէք վէ ինսանլարա պիր շէքլի սալին վէրէ-
ճէք օլան, Յիսուս Քրիստոսա գարչը կէօսթէ-
րիլէն տտալէթ տիր, զիրա էյէր պու խիւ-
լեաիա գարըլարապ ալտանան մէհապպէթ պու
կիպի շէլլէր եարըյօրսա, եա օ ֆիքրէ մու-
խայիֆ օլան տտալէթ, նէլլէր եարմայաճագ-
տըր: Բէք էյի, Քրիստոսըն պու տտալէթի
ինսանլարա նէ եարմըլտըր, նէրէտէ տիր օ-
նուն էսէրլէրի, հանկի միլլէթլէրի պարպար-
լըգտան գութարմըլ, հանկի բուհլարը թէսէլլի
իթմիշ, նէրէտէ տիրլէր ծնուն Սէօր սըլ շա-

րիթէլէրի, Թրէր տը լա տօքթրին քրէթիէն-
լէրի, Բրթիթ սէօր աէ բօվրլարը, Նանա
միւհթաճ քիմսէլէր վար. Էյ Քրիստոսա
գարչը կէօսթէրիլէն ատավէթ, նէրէտէ տիր
սէնին, ծնլար իչուն իանէ թօրլայանլարըն:
Աճըլար, աղըլար իչինտէ էօլէնլէր վար,
նէրէտէտիրլէր սէնին խասթա պագըճը մայ-
րապետլէրին: Էյ Քրիստոսա օլան ատավէթ,
հէր զահմէթ եէրինտէ, հէր Ֆէրեատ ու Ֆի-
ղան մահալինտէ սէնի արաեօրում վէ պու-
լամահօրում:

(Մապաթի վար)



ԱՌ ԱՂԵՔՍԱՆԴԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ
Է ԶՄԻԱԾՆԻ

(Շար.)

Դարձեալ զայն և ևս ծանուցից հրամա-
նուցք՝ ըստ առաջնոյն հրաւիրեալ նուիրա-
կաց որք գային ի Սուրբ Էջմիածնա օրհնեալ
միւռնոսիւ, Նախ Մինաս վարդապետն որ
բազում պատճառ եղև յարարորդել զպարտ-
ւըն սուրբ յերուսաղէմայ մինչ ԲՃ. քիսէ.
մյաբանեալ ձեռամբ չար իշխանացն յորժամ
եղեւն առաջնորդ յերուսաղեմայ, երկրորդ
եկեալ քոլէ Յովսէփ վարդապետն, որ յայտ-
նի ցուցանէր զինքն բարեկամ երկաթնակ
ժողովոյն՝ որ բնաւ ոչ լուաք ի նմանէ ի
քարոզեալն զմիաւորութիւնն բանին և մարմ-
նոյն անշփոթ դոլ ի Քրիստոս մի բնութիւնն,
և էր սիրելի բարեկամ նոցա: Եւ սա կամե-
ցաւ ուսման իմաչատուր արեղայի միոյ՝ տալ
գաւազան վարդապետական կարգի՝ զի յայտ-
նապէս քարոզել զեկեղեցիս Հայոց զազանդն
Քաղկեդոնի: Եւ լուաք զայս իրս գրեցաք
գիրս առ սուրբ Գէորգ Եկեղեցին ի ձեռն
քոլէ Յովսէփ վարդապետին, մեծ գուշու-
թեամբ աղերսանօք՝ զի մի տացէ գաւազան
և իշխանութիւն նոր ոմն հերձուածոյն: Եւ
նա անտես արար զգիր մերոյ աղերսանաց.
առեալ նոցանէ ոսկի՝ և արծաթ: Սկսաւ կո-
չումն. նղովեաց զամենայն հերձուածան յան-
ուանէ և ոչ զՔաղկեդոն, և ոչ զԼեւոն: Եւ
այնու ճոխացան, շատացան հերձուածողքն

օր օրէ: Եւ տեսեալ զլուսաւորչածին ժողո-
վողեանս՝ զղասս անիծելոցն որք շատացան
վասն որոյ միաբանեալ մերոց գրեցաք զիրս
եղելոցն մահաբական կնքով՝ առաքեցաք առ
կաթողիկոսն պանպատ ԻԴ. չար իշխանաց
ի Ադրիանուպօլսէ, և այլն ի Կոստանդինու-
պօլսէ: Եւ հոգեւոր տէրն առաքեաց նոցա
անէծս՝ և կապանսն և գիրն բացեալ յեկե-
ղեցիս մեծի հանդէսիլ՝ ոլ հրաշալին երգով՝
կրկնապատիկ նգովեցին դերաբոյս հերձուա-
ծողսն յանուանէ: Եւ որոշեալ ի բաց հերքե-
ցաք զուրացեալքն յեկեղեցւոյն Աստուծոյ:
Եւ ի յայնմ ամի հրաւիրակն ի Սուրբ Էջ-
միածնա վարդապետն եկեալ միւռնոսիւ և
այնք տասն Ախթարմայոցն սկսան պատիւս
առնել նմա խաբէութեամբ կերակուրս պէս-
պէս՝ և ըմպելիօք խնէչացուցեալ, թէպէտ
ինքն ոչ էր նոցա աղանդիւն սակայն ոչ յան-
դիմանեալ՝ եւ ոչ սաստեալ. և ոչ զսահման
հաւատոյս արտաբերութեամբ քարոզեաց: Եւ
մերոց ստէպ ստէպ գուշացուցեալ՝ զի է քեզ՝
ընդէ՛ր ոչ քարոզես զսահման հաւատոյս մե-
րոյ՝ յանդիման կացուցանելով զուղղափա-
ռութիւն լուսաւորչադիր յօրէնս Հայոց սաս-
տելդ նոցա դառնալ ի յուղղութիւն: Եւ
նուիրակն Էջմիածնա զայս պատախանեաց
մեզ. Զինչ ևս փոյթ է ինձ. զի ոչ է հրա-
մայեալ վեհէն իմոյ՝ պալ ի տեղս արկանել
խռովութիւն, զայն և ունիմ հրաման առ-
նել զնուիրակութիւնն իմ և սանել յաթոռն
առ վեհն իմ: Եւ ել գնաց Այրիանուպօլիս՝
զայն բանադրեալքն ի վեհէն ԻԴ. գլխաւոր
արանցն պատուեցեալ ըմպելիօք որպէս և
գրեցաք ի վերոյ՝ առեալ ի նոցանէ Ա. քիսէ
ստակ առանց զղջանալոյ՝ որ հաւանէին ամէն
մարդ մին մին քիսէ տալ յաթոռն՝ զի բար-
ձի բանադրանքն. և խաբեցին զհոգեւոր
տէրն եթէ զղջացան՝ և բերին արձակումն,
որ նոքա մինչ ցայսօր ի նմին դառնութեանն
կան և մնան և գործեն չարութիւն: Բնաւ
ոչ դարձան Ախթարմայութենէ՝ և կան յա-
մառեալ եւ շառաչիռեալ իրերաց պիղծ խմո-
րուն Քաղկեդոնի: Եւ մերոց նախ առաք
մահսէրն ոչինչ արարին վասն կաշատոյ՝ հրա-
ւիրեալքն Էջմիածնի: Վասն որոյ, զիմք

ոչ ողբասցուք ծնունդք սուրբ հօրն մերոյ Գրիգորի՝ որ բազմաշարչար վշտանօք ծնաւ զմեզ ի խաւարէ ի լոյս։ Որոյ հիմանն չինեցաւ եկեղեցի հրամանաւ հօր Որդւոյն Միածնի՝ Սուրբ Հոգւոյն, ըստ որոյ կոչեցաւ Սիոն հաւատոյ տունն հայկազնւոյ։ այժմ որդիք Սիոնի՝ արկանեն զարհամարանս Սիոն։ հեշտաբառիւ չըջել զհաճոյսն հեշտասիրաց՝ յազաքս ոսկւոյ՝ և արծաթոյ։

Ի թիւ արկութեանս զայս ինչ ամբաստանութիւն մի իմասցի մնաս յաթոռոյն։ և զգանձանակի նմին ասեմք յազաքս ոսկւոյ և արծաթոյն։ Բա՛ւ և մի լիցի զայդ մտաւածել։ Որպէս զի պարտական է որդիք հատուցանել զվարձս ծնողի զնոյն պարտական եմք մարմնով, եթէ ոչ հոգւով։ Յաղագս այնր գրեցից հրաւիրեալ նուիրակաց՝ որք երեսպաշտութեամբ չըջին ոմն կաշառօք, և ոմն պչիկ գոլ երկչոտութեամբ երկնչիւր յումեքէ։ Եւ ոմն թէ ինչ փոյթ է ինձ քարոզել զուղիղն ընդդէմ երկաթնակաց քանզի ժողովն իմ անձինս ոչ արկանեն փող ի դանձակս իմ զայս և այսքան նիւթիւ ի միտս իւրեանց վասն մոլեգնութեամբ խափանեն ճշմարտութիւնն, և ոչ յարձանացուցանիցեն զքանն Կիւրդի՝ որոյ հիմանն շարահիւսեցեալք գոն յոլով վկայս՝ հայրապետաց, և աստուածաբան վարդապետաց՝ նախնեաց սրբոց գրեւոց ի գիրս աստուածաբանութեանն իւրաքանչիւր ումեք։ Եւ որ ոք ծարաւի իցէ՝ խնդրիցէ և ի գտանելն նախ արլցէ ինքն կատարեալ։ Եւ ապա կարողասցի արբուցանել ոմանց որք ծարաւի իցեն, և ասէ՝ առցէ զվարձս բազումս։ Մըդ ոչ բնաւ զգուշացուցեալ եկեղոցն ի գիր առեալ բանիցս, որոյ զանց առեալ զհիւանդս անբուժելի և գնացիս, մնաց որպէս գիշատեսակ ցաւս փոխելով միմեանց շատացեալ բազմացան։ Հինգերորդ, եկն հրաւիրակ այս անուն՝ վարդապետն ի Սուրբ Էջմիածնէ, միամիտ գոլ, զգիկ բնութեամբ նա ևս ընդ նոցին առեալ նմանութիւն բերէ զինքն վախեալ ումեքէ։ Չայս ինչ հարկ եղեալ ժողովրդեանս զրել զպակասութիւն իր մի մնասու ընդդէմ կանոնական հարցն։ Եւ Ըստամպօղու սահմանս

մօտ Ղալաթիա քաղաքն երիտասարդ մի ումն մնալ զստերի զկուսութիւնն ներգործեալ խաբանօք իբր նա առցէ իւրն կնութիւն։ Եւ ի գիտանալն ոչ էառ, այլ յայլում դասերւոյ գրաւեցաւ նշանօք, եւ եկն զտէր աղջկանն առ Պատրիարքն, եւ նա ոչ ետ հրաման առնել յետինս, այլ զայն որ գիտաց զնա։ Եւ երիտասարդն եկեալ առ նուիրակ վարդապետն, եւ նա զրեալ գիր այսպէս։ Ես նուիրակ վարդապետս ետու հրաման ներսէս վարդապետի խաթերն, որ ի ժամանակին պատրիարք էր։ յետինն առեալ պսակեսցէ և ոչ զառաջի գիտացեալն։ Վասն որոյ բազումք գիտողաց զայս, եւ յոյժ զզուեալ վիրաւորեցան։ Եթէ յօրէնս մեր ի թուլան մորթ սեւագլուխոց է աւերումն եւ քանդումն ամենայն իրաց աւաճ որ ոչ ունիմք զսոցա քննիչ կաթողիկոս ասէին։ Չայս մեծի աղերսանօք խնդրեմք ի քէն առաքեսցես խորիմաց աստուածաբան վարդապետացդ երկուս եւ կամ երիս։ որ մինն աշակերտացդ յերուսաղիմայ եկեալ ըստամպօղ եւ սիրեցեալ Աւետիք վարդապետէ յոյժ վասն առաւել գիտութեամբն եւ քարոզէր ընդդէմ երկաթնակ ժողովոյն՝ վասն որոյ սիրեցեալ յոյժ ի ժողովրդենէս։ Եւ վարդապետն զնա արար ամենեցուն հաւանութեամբն հաւատարիմ յերկուց յաթոռոց իւրն վէքիլ յերուսաղիմայ եւ Կոստանդինուպօլսի եւ բազումս մոլորելոցն զարձոյց զուղղափառութիւնն գերագոյն քարոզութեամբն եւ կարկեաց զբերանք երկաթնակաց հակաբանութեամբ։ Եւ ինքն էր իզմիրցի Ոհաննէս վարդապետ աշակերտ հրամանուցդ ասէր զինքն եւ նա յղեալ առաքեսցես միապէս ընդ վարդապետացդ՝ եկեալ մխիթարեսցէ զմեզ մնալով ասդէն՝ յամ յամէ, ուսուցանել ի դպրոցի զմանկունս քո որպէս եւ վայելէ բազմութիւն ժողովրդեանս։ որքանութիւնն դոյ ձմի։ զոր օրհնեմք զԱստուած եւ զքեզ որ յառաւել եմք ամենայն քրիստոնէից աղգաց։ Միթէ ոչ է արժան դպրատանց և վարդապետք գիտունք զետեղեալ ի տեղս որոց ուսեալ պայծառացեալ ճոխառցի յազգս որով մաքրեալ սրբիցեմք պիղծ խմորուն Բաղկեղոնի։ Դարձեալ զի

յամենեցունց խնդիրն կրկնապատիկ և հազարապատիկ խնդրելով խնդրեմք ի սուրբ Հօրէ՛դ՝ քանզի ճարն մնաց հրամանուցդ՝ միայն գիր մի ի վերայ յաթոռակալին Պետրոսի առաքելոյն՝ Բ. եպիսկոպոսիւ՝ ծանուցանել նմա զամենայն զիրա խաբէութեան ախթարմայ ուրացողացն մերոց՝ և խնդրել զեպիսկոպոսն Հայոց՝ զի ոչ է օրէն զեպիսկոպոսն Հայոց երկաթի կապանօք գերեցուցանել լոկ աշխարհական մի՝ և այլ բանք յայլում տեղւոյ գրեցաք. բայց հրամանուցդ որպէս վայել է՝ խնդրեմք վաղվաղակի զպաղատանքս շնորհել մեզ՝ և առաքեա՛ր բազում մասամբ և բազում օրինակօք. Մինչ զի մի մահացուցանիցեն զի յողորմութիւնն Աստուծոյ յուսացեալ եմք. զմահ և զկեան ի ձեռին Աստուծոյ է. Դարձեալ զնոյն կրկնեցուք վասն վարդապետացդ զալ ի տեղս՝ քաջաբանք յամենայն կողմանէ ոչ յերկնչել յումեքէ և ոչ ի արքունուստ զարհուրանաց՝ որպէս զտեղի եղեալ քաջասիրտ զՈվհաննէս վարդապետն եղեգեցի որ բազում անգամ ընդդէմ թագաւորացն բռնութենէ ոչ երկնչէ՝ կալ յանդիման տալ պատասխանիս՝ որպիսի իրացն առնել զեկուցումն և յոյժ ներհակ ախթարմայիցն և խնդրէ զԱւետիք վարդապետն վասն այն մեք զսա արգելաք կալ ի տեղս մինչ վարդապետն գայցէ. Եւ հրաւիրեալքն ի սուրբ յաթոռէն՝ զի մի լիցի ըստ վերոյգրեալ թուլասիրտ նուիրակաց. բայց իզմիրցի Յովհաննէս վարդապետն միապէս գայցէ. Դարձեալ և ևս խնդրեմք վասն տպագրութեանց՝ որ ոմանք զսուրբ գրեանս ապականեցին. Այժմ խնդրեմք հաստատումն տպագրութեանցն գրել ի վերայ Գրիգոր դպրի՝ զի սա ընդ մեզ է և հաւատարիմ սուրբ յաթոռոյդ մահու չափ. Եւ ոմանք ընկերացեալ ընդ սմա վասն այսմաւորք տպելոյ, և տպեցին Գրիգոր դպիրն ԹՃԿ. այսմաւորք, և ընկերք անողորմ զրկել կամեցան զԳրիգորն. Եւ հրամանքդ արացես զդատաստան որպէս վայել է՝ և զայլն ի յայլում տեսցես զի մի երկարասցի բանքն ի տեղիս՝ և ևս տուգախիցի այրի Ղազար երէցն որ իզմիրցի Յովհաննէս վարդապետն տեղեակ է

բանիս և այն Ղազար երէցն՝ ստաբան և խաբեբա՝ բազում վնաս հասոյց այս Գրիգոր դպրիս և առեալ բազում տպագրեանց կազապարներն փախեալ. Եւ խնդրեմք զնա ձեռացն առնել՝ և յղել առ մեզ. Եւ դարձեալ այս ոք են զսաք զլիսաւոր ախթարմայիցն, որք պատճառ եղեն բազում մողորեցուցանելոյ և հակառակ սրբոյ յաթոռոց և քակտիչ յուսաւորչադիր յօրինացս մեր և այլալոյղք. անարգիչ և հայոյիչ եկեղեցւոյն մեր. Եւ անհնազանդ Սուրբ Էջմիածնի. Վասն որոյ խնդրեմք ի սուրբ յաթոռէն և ի սուրբ իշման տեղէ՝ և քո անանց հրամանէն որ ունիս իշխանութիւն ի Բրիտտոսէ՝ ճշմարիտ առաքեալն Բրիտտոսի դա՝ որ կարող ես կապել և արձակել յերկրէ յերկին մարդիկք և հրեշտակ՝ և ամենայն ոգիք. Եւ առաքեսցես զանէծս՝ և զկապանս անթողելի յանուանէ զամենայն հերձուածողոյն և զկնքեալ մոհրերս պահեսցես ընդ քո մինչ վկայութիւնն վասն դարձի սոցա ոչ եկեսցէ զկնքս այս ամենայն առ յաթոռ քո և կամ ինքեանք եկեսցեն յաթոռ քո. ոչ լինել ներումն՝ որպէս զի տեսանեմք ճշմարիտ զեղճ անիծելոցն. (Շարուցակելի)

ԵՕԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՆԵՒ

ՀՈԳՆՈՐ ՄՏԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ՝ ԳՐԲԷՆ

Գիր Ա.—Դ. Ի. —Առաքմութեան ու լուսութեան սիրոյն վրայ:

(Շար.)

Ո՛չ ոք արժանի է երկնաւոր մխիթարութեան, երբ տուր զղոման մէջ մեծ փութաբանութեամբ ինձ զինքն ի հրահանգած:

Երբ կ'ուզես ի քողոր արեւ զղոմանք զգածուի, մօի՛ր սեկեակդ, եւ դուրս քրեւ աշխարհի սոսնուկներ, ինչպէս գրուած է. «Ձեր անկողիններուն մէջ զղացեի»:

Խցիկիդ մէջ պիտի գտնես՝ ինչ որ դուրսը սեւ պիտի կորսնցնես:

Երբ վարժուիս ինչիկիդ, կը խղճուանայ, իսկ երբ սովորես անկէ դուրս քափառիչ, ճանճութիւն կը պատճառես:

Երբ ի սկզբան դարձիդ՝ անընդհատ քնակիս անոր մէջ ու պահպանես, վերջը պիտի ըլլայ ինչի սիրելի քարեկամ ու անենահաճոյական սիրտիս:

ՍՐՐՈՒՀԻ ԹԵՐԵԶԻԱ

Այս տարի կը կատարուի Սրբուհի Թերեզիայի երանացման երեքհարիւրամեակը, որուն առթիւ Պիոս Ժ. Ս. Քահանայապետը սքանչելի կնիգակ մը զրկեց բոկոտն Կարմեղականաց Կարգին: Ս. Թերեզիայի համառօտ կենսագրութենէն յետոյ պատշաճ կը համարինք աւելցնել այս կնիգակը ուր Ս. Հայրը կը գրուատէ Սրբուհւոյն գերականաց առաքինութիւնները յօգուտ եւ ի շինութիւն հաւատացելոց:

Բռկածն Կարմեղականաց ընդհանուր Տեսուչ մեր ամենասիրելի Քրդայն Կոնսէլի, եւ ամբողջ Կարգին:

ՊԻՈՍ Ժ. ՔԱՀԱ ԱՍՅԱՊԵՏ

Սիրելի Որդեակք,

Ողջոյն եւ առաքելական օրհնութիւն:

Այն օրէն ի վեր, ուր աստուածային բարութիւնը, մեր խնամարհ անձը ընտրեց ծայրագոյն Քահանայապետութեան համար, Մենք միշտ նկատեցինք իրեւ առաքելական պաշտօնին գլխաւոր պարտքերէն մին՝ փառաւորել ամէն հանգիստաւոր պարագաներու մէջ, Եկեղեցւոյ այն զաւակները որ երեւելի եղած են իրենց փայլուն առաքինութիւններով, իրենց անսայթաք վարդապետութեամբ եւ իրենց փառաւոր ձեռնարկներով: Արդարեւ գործերը խօսքերէ շատ աւելի յարմար են հոգինքը գէպի բարին մղելու: Ուստի ամէն բան Քրիստոսով նորոգելու մեր հաստատուն դիտաւորութեան իրագործման՝ յորդորներէ աւելի պիտի նպաստեն օրինակները այն անձերու, որոնք նոյն ինքն Յիսուսի Քրիստոսի շատ մօտէն նմանելու ջանալով, անոր սուրբ պատկերը հիւնադրութեն փայլեցուցին իրենց վրայ:

Մենք հաւիւրամեակ մը

Ահա այս խորհուրդով է որ Գրեգոր Մեծի, Յովհան Ոսկերեանի, Անսեյմոսի, Ռեոմոսի հարիւրամեայ հանգիստութիւններուն համար, անոնց գովութիւնը պարունակող գրութիւններ զրկեցինք կաթողիկէ աշխարհին, եւ յիշ ժամանակ առաջ ալ քրիստոնէութեան յիշեցուցինք Կարլոս Պորտուէսի յիշատակը՝ անոր սրբոց ցանկին մէջ արձանագրուելուն երեքհարիւրամեակին առթիւ:

Նոյնօրինակ հանգէս մը, Սիրելի Որդեակք, տեղի պիտի ունենայ մեր նշանաւոր Կարգին մէջ, առաջիկայ Ապրիլ ամսուն, ըստ որում երեք հարիւր տարի է որ մեր նախորդ Պօղոս Ս. երանելեաց պատիւները ստաւ Թերեզիայի, մեր Մօր եւ մեր Օրէնդրուհիին: Դուք՝ վերջերս գումարուած միասնական ընդհանուր ժողովէն յետոյ, յայտնեցիք Մեզի մեր գիտաւորութիւնը այս բարեկան գէպը յիշատակելու, կատարելով այն թուականին, հանգիստաւոր տօներ, որոնցմով ըստ կարի անթերի կերպով պիտի մատուցածք Աստուծոյ մեր անհուն շնորհակալութիւնը:

Սրբուհի Թերեզիայի ազդեցութիւնը

Մենք բարձրաբար առ կը հաւանինք մեր առաջարկութեան, եւ բոլոր սրտանց, յանուն ընդհանուր Եկեղեցւոյ, կը մասնակցինք մեր որդիական ուրախութեան: Որովհետեւ այն փառքերուն եւ լուսաւորութեան մէջ, որոնցմով կը պարծենայ քրիստոնէայ տիեզերքը, Աւելայի Կոյսը նշանաւոր տեղ մը կը գրաւէ: «Այն զոր Աստուած լեցուցած է իմաստութեան եւ հանձարի հոգիով եւ ճոխացուցած է իր շնորհաց զան-մերով այնքան առատօրէն որ պայծառութիւնը որով կը ցոլայ, իբրեւ տառք մը երկնականարին վրայ, պիտի տեսէ Աստուծոյ տան մէջ յաւիտեանս յաւիտեանից:» (Կոնդակ սրբացուցման): Այսպէս կը խօսի Գրեգոր Ժ. Քահանայապետը եւ որքան իրաւացի է այս Թերեզիայի գովեստը: Արդարեւ Քրիստոնէայ ժողովաւորին կազմակերպութեան վրայ այնքան խոր եւ արդիւնաւոր չէ եղաւ իր ազդեցութիւնը որ, կեն ըլլալով մէկտեղ, շատ վար չի ջնար Եկեղեցւոյ այն նշանաւոր հայրերէն եւ վարդապետներէն որոնց վրայ խօսեցանք, եթէ նոյն իսկ ամէն կերպով անոնց չի հաւասարիր:

(Շարունակելի)

Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ԴԱՐԵՐՈՒՆ ԾԵՍԱՎԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ

(Շար. եւ վերջ)

Ս. Հաղորդութեան՝ եւ այս աստուածային սնունդին համար առաջին քրիստոնէաներու տաճած եռանդնաբորբոք փափագին յիշատակը ամէն տեղ երեւան կու գայ մեզ գեանաւորամբաններու մեծայարգ սրբատեղիներուն մէջ. եւ այս յիշատակը կ'ընկերանայ մեզի այլեւայլ ձեւերու եւ այլաբանութիւններու ներքեւ՝ առաքելական ժամանակներէն մինչեւ այս սրբազան տեղերու լքման օրը: Եւ այս յիշատակարաններու երկար ու մեծապէս կարեւոր շարքը եւ անոնց նշանակութիւնը՝ նկատմամբ հանդերձեալ կենաց ու երկնաւոր երջանկութեան, կ'ապացուցանէ մեզ, միշտ աւելի քացայայտ ստուգութեամբ եւ պայծառութեամբ, թէ՛ Ս. Հաղորդութեան հրամանակարգ վարդապետութիւնը մինչեւ առ մեզ եկած հասած է անվթար ու անայլայլ միշտ այնպէս՝ ինչպէս որ կը դաւանէին առաքեալները: Կրնանք դեռ աւելին ալ ըսել. Գոհութեան Ս. Խորհուրդը մեր հաւատքի մէջ նախահարց համար ընդունայն ու ամուր յիշատակութիւն մը չէր վերջին Հնթրեաց,

ինչպէս որ կը յաւակնին պնդել բողոքականները, այլ անկախ էր ճշմարտապէս՝ ինչպէս որ միշտ եղած է եւ դեռ այսօր ալ է, Կաթողիկէ պաշտամունքի կեդրոնը, քրիստոնեայ կեանքի Հոգին եւ Եկեղեցւոյ ճառագայթաբաշխ արեգակը:

Թող տրուի ինձ այս սփոխարար ճշմարտութիւններէն հետեւցնել քանի մը գործնական եզրակացութիւններ, վերաբերմամբ Կաթողիկէ գործունէութեան եւ առաքելութեան զոր ամէն մարդ կը պարտի կատարել: Նախնի քրիստոնեաներն՝ որոնց յիշատակը արդ իսկ դարձեալ, յաւիտ պէտք է ըլլան մեր հայելի օրինակները, քանի որ անոնք մեզի համար կը ներկայացնեն առաքելական աւանդութիւնը. արդ մենք ապահով եւ ստոյգ ենք՝ Սրբոյն Յուստինեայ եւ միւս ջատագոյներու համաձայն, որ առաջին հաւատացեալներն գործնականապէս կը մասնակցէին այս ծիսական համախմբումներու, որոնց վրայ խօսեցանք վերեւ, որով եւ կը կարողանային ըմբռնել անոր վսեմ գեղեցկութիւնները եւ այսպէս հզօրեղապէս միեւ յամբանել իրենց հաւատքն ու սէրը:

Ս. Գրքը, որուն ընթերցումը ամբողջական մաս մը կը կազմէ Ս. Հաղորդութեան արարողութեանը զոր մենք «*Պատարագ*» կ'անուանենք, առաջին հաւատացեալներու սովորական եւ ամենօրեայ ընթերցման գիրքն էր, Կիտոնադամաններու նկարներուն մէջ, աղօթողներու քով որ ննջեցաւ հաւատացեալներու հոգիները կը ներկայացնեն, մենք ստէպ կը տեսնենք կամ Ս. Գրքին հատորները կամ Աւետարանը բացուած. ասկէ յայտ յանդիման կ'երեւի թէ այս սրբազան մատենաներու մէջ պարունակուած աստուածային վարդապետութիւնները անոնց կանոնադրեալ եւ առաջնորդն էր իրենց հոգիներուն՝ երկինք տանող ճամբուն մէջ:

Բայց (պէտք է խոստովանինք զայս), Կաթողիկէ Ժողովրդեան մեծագոյն մասը Պատարագով այնքան չի չահագորդուիր այժմ, եւ՝ հետեւաբար, մեր պաշտաման մէջ ամենէն էական ու ամենէն գեղեցիկ արարողութեան իրականապէս մասնակցելու այնքան

փոյթ չի ցուցնիր: Եւ ես կը խորհիմ թէ կրօնական զգացմունքի այն ողբալի անկումն զոր այսօր հաւատեօք կը տեսնենք, նաեւ բազմաթիւ Կաթողիկէից մօտ, յառաջ կու գայ այսչափ մեծ խորհրդոյ մը նկատմամբ եղած այս անտարբերութիւնն եւ Ս. Պատարագի լոկ նիւթապէս ներկայ ըլլալն. անոնք օտար են այս վեհաշուք ծէսերու, որոնք ամէն օր կը կատարուին մեր խորաններուն վրայ:

Քրիստոնէական աստուածաշատութեան ամէն գործերն ազնիւ են ու գովելի, անտարակոյս. բայց անոնցմէ եւ ոչ մին կրնայ մեր հաւատքին տալ ոյժ եւ կորով եւ զայն հաստատուն ու տեւական գործել, ինչպէս լիովին ու կատարեալ մասնակցութիւն մը՝ մեր պաշտամունքին ամենէն հանդիսաւոր եւ ամենէն ազնիւ գործոյն, կամ աւետարանի կամ Կտակարանաց ուրիշ գրքի մը ընթերցումը:

Պէտք չէ հեռուէն նայիլ խորանին, ինչպէս կը նայուի թատրոնի տեսարանի մը, այլ պէտք է որ փութանք մերձենանք անոր քովը: Հոն կը գնուի մեծ գոհը. հոն է յաւիտենական կեանքի հացը, քրիստոնէից կերակուրը, հոն է նաեւ Աստուածային Աւետարաններու սրբանուէր Գիրքը, որմէ կը ճառագայթէ ճշմարտութեան լոյսը: Առանց այդ կերակուրին պիտի մեռնէինք մենք. առանց այն լուսոյն, խաւարի մէջ պիտի խառնափէինք մենք:

Ուստի ես թախանձանօք պիտի խնդրէի ինչպէս որ անդադար պէտք է, ամենամեծ մղումը տալու արարողական գրքերու Ժողովրդական տպագրութեան, հրատարակութեան եւ նոյն իսկ ձրի բաշխման ընդհանրապէս. եւ ես մեծ վստահութիւն ունիմ աս սուրբ գործին, յուսալով որ այնչափ բարի բայց տգէտ Կաթողիկեայք չպիտի մնան ինչ որ այսօր են, այս է՝ ցուրտ եւ անտարբեր հանդիսատեսներ՝ իրենց չհասկցած ու հետեւի չկրցած ծէսի մը, այլ՝ ըստ օրինակի առաջին հաւատացելոց. պիտի ճաշակեն այն սրբազան գրքերը, զորոնք եկեղեցին կը կարգացնէ Պատարագի առեւ ամենուն հրահանգութեան համար եւ պիտի միանան այն վսեմ աղօթքներուն: Գորոնք յանուն ամէն ներ-

կաներու ըսել կու տայ նա իր պաշտօնէից։

Եւ իբր վերջարան, պիտի յիշեմ որ Ս. Հաղորդութեան երկնաւոր հայր, որ այնքան յաճախակի ներկայացուած է գետնադամբաններու մթին որմերուն վրայ, կազմակերպեց մարտիրոսները, և ամենէն ստորնաքարչ զգայական ցանկութիւններու եւ հեթանոսութեան ամենէն անտրամաբան աւելորդապաշտութիւններուն մէջ ծնած ու անած մարդերը ճշմարտութեան եւ արդարութեան զարմանալի գիւցազններու փոխարկից. ո՛չ, ներկայ անհաւատ աշխարհը բնաւ տարբեր չէ վաղեմի կռապաշտ աշխարհէն. ունի նա իր կիրքերը՝ ստորին, գձուձ եւ կատաղի, իր նիւթոյ կռապաշտութիւնը եւ իր եսականութիւնը, զոր ի զուր կը ճգնի նա քօղարկելու բոլոր մարդկութեան սիրովը՝ զոր իրապէս չի զգար եւ որուն լաւ եւ մաքուր մընացած ամենաշնչին մէկ մասը իր գոյութիւնը կը պարտի իր կողմէ յանիրաւի լքման զատապարտուած քրիստոնէութեան։

Բայց Ս. Հաղորդութիւնը որ կերպարանափոխ ըրաւ հին հեթանոս Հոովմը, պիտի փոխակերպէ նաեւ այսօրուան հեթանոս աշխարհը։

Թո՛ղ անոնք որ կ'ուզեն գործակից ըլլալ այս մեծ գործին, խմբուին այս աստուածային խնջոյքին շուրջ, որ մեր հայրերուն տուաւ՝ եռանդի հետ նաեւ արիւթիւն զուարթերես պատարագուելու ամփիթէատրոններու կամ կրկէսներու մէջ, վսեմ գոհեր արժանապատուութեան և ազատութեան մարդկային ազգիւ-

Գետնադամբաններէն՝ ուր հազիւ հազ կը լուսաւորուէր զողողազին՝ գերեզմանափորներու բռնած ջահերով, Ս. Հաղորդութեան արարողութիւնը ելաւ բարձրացաւ մեր անմահ Մայր Եկեղեցիներուն փառաւորութեանց, և ասիկայ ուրախադիմ աւետում մըն է Բրիստոսի վերջնական յաղթանակին բովանդակ աշխարհի վրայ։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ՆԱխնիք կը կարծէին թէ երկնային մարմինները անապական են եւ անոնց մէջ երեւան եկող եղանակաւորութեանը արդիւնք են մի միայն աստղերու տեղափոխութեանց որոնք տեղի կ'ունենան որոշ շրջանակներու մէջ։ Հին աստեղները աստղաբաշխներուն գործն էր զննել երկնային երեւոյթները, լուսին, արեւուն, մոլորակներուն եւ աստղերուն շարժումներուն տեղեկանալ՝ զանազան մեծութեամբ շրջանակներ ալիւեալ եղանակաւ իրարու համեմատելով։ Անոնց կարծիքով կարելի չէ որ երկնից մէջ իրապէս նոր փոփոխութիւն մը պատահի։ Այն ժամանակին գիտունները կ'ըսէին. «Ոչ ծնունդ ոչ ապականութիւն»։

Ուստի շատ տարօրինակ երեւցաւ գիտուններու երբ 1610ին, Գալիլէոս՝ նորահնար գիտականընէն մին արեւուն ուղղելով հաւաստեց եւ յայտարարեց թէ Արեւը բիծեր ունի։ Ասիկայ ճշմարտութեան մօտ չերեւցաւ. որովհետեւ ընդունուած էր թէ կարելի չէ որ աստղերու ջինջ պայծառութիւնը աղօտանայ։ Սակայն ճշմարիտ էր այս։ Եւ այնուհետեւ տակաւ առ տակաւ երկնային մարմինները ինկան իրենց անապականութեան փառքէն։ Արեւ, Երկիր, Լուսին միեւնոյն տարբերէ բազկացած են։ Լուսինն ու երկիրը մարած աստղեր են. մինչդեռ արեւը, իր զանգուածին մեծութեան պատճառաւ, շատ աւելի երկար ժամանակի մէջ կրնայ պաղիլ միւս երկու փոքր աստղերուն պէս։

Արեւուն բիծերը, որ Ժէ. դարուն գիտունները կը խռովէին եւ կը գայթակղեցնէին, վիթխարի փոթորիկներ են որ տեղի կ'ունենան Արեւուն պայծառ ոլորտին մէջ։ Ասոնք երեւան կու գան, կը մահն քանի մը ամիս կամ քանի մը շաբաթ, Արեւուն ինք իր վրայ դառնալուն հետեւանքով աներեւոյթ կ'ըլլան, եւ այնպէս ժամանակ մը արեւուն անտես կիսագնդին ետին ծածկուած մնալէ յետոյ դարձեալ կ'երեւան։ Այս բիծերը գրեթէ տառնեմէկ տարին անգամ մը աստիճանաւոր բազմացում մը ցոյց կու տան. այնպէս որ տարիներ կան որ Արեւը շատ բիծեր կ'ունենայ, տարիներ ալ կան որ անոնցմէ գրեթէ բոլորովին գերծ կ'ըլլայ։

1913ին, մի քանի ամիս շարունակ արեւուն վըրայ բնաւ բիծ չերեւցաւ։ 1810էն ի վեր երբեք տեղի ունեցած չէր այսպիսի երեւոյթ մը։ Ուստի 1913ին, Արեւը, գիտական բացատրութեամբ, ամենէն նուազ գործունէութիւն ցոյց տուած է։ 1911ին Արեւուն բիծերուն թիւը կը հասնէր 62ի, 1912ին՝ 39ի, 1913ին՝ 15ի։

Այս տարի օգոստոս 21ին արեւու սոբոլջական խաւարումը շատ սքանչելի տեսարան մը պիտի պարզէ։ Որովհետեւ ամբողջական խաւարումներուն բուն գեղեցկութիւն տուողը՝ արեւը բոլորող պսակն

է որ տեսանելի կ'ըլլայ երբ լուսինը իբրեւ լուսարգել կը մտնէ երկրի եւ արեւուն ակնախտիդ սկաւառակին միջեւ: Արեգակնային ամենանուազ գործունէութեան միջոցին այդ գոյորշախառն եւ երփնագեղ պսակը աւելի շահեկան երեւոյթ մը կ'ընծայէ. որովհետեւ այն ատեն փոխանակ սկաւառակին շրջագիծը միապաղաղ կերպով բոլորեւթ, տեղ տեղ ցրուածքներ եւ կարեւոր խորտուբորտութիւններ ցոյց կու տայ:

Այս տարուան ամբողջական խաւարման դափն 150 հազարամէր լայնութիւն պիտի ունենայ եւ պիտի անցնի Ամերիկայի Հիւսիսային կղզիներէն յաջորդաբար Կրօնլանտ, Նորվէկիա, Շուէտ, Ռուսիա, իրիմ, Փոքր-Ասիա, Պարսկաստան եւ Հնդկաստան: Ամբողջական խաւարման առաւելագոյն սեւեռութիւնը, որ է 3 վայրկեան 14 երկվայրկեան, տեղի պիտի ունենայ Ռուսիոյ միջ Վիւնայի Արեւելեան կողմը:

ՆԱԽԱԳԱՀ ՈՒՒԼՈՐՆ ԵՒ ՄՈՒՆՈՒՆԵՐ ԲՈՂՈՔԱՎԱՆՆԵՐԸ.— Ամերիկացի Եպիսկոպոսի մը յայտարարութեան նայելով, տարիէ մը ի վեր Մ. Նահանգաց մէջ կաթողիկէ եկեղեցւոյ դէմ բռնուն ատելութիւն մը գրգռելու ճիգեր կը թափուին: Վերջերս սկսան հրատարակուիլ շատ պարբերական թերթեր, որոնց միակ նպատակն է եկեղեցւոյ դէմ պայքարիլ: Սակայն գիտնալով է որ այս պայքարին հակառակ է ամերիկեան ժողովուրդին մեծ մասը: Այս հակակաթողիկէ ատելութեան վերարժարժու մը արդիւնք է մի քանի մոլեռանդ բողոքականներու որոնք չեն կրնար չկատարիլ ի տես իրենց աղանդներուն հիւծախտաւոր կացութեան եւ կաթողիկէ եկեղեցւոյ յարաձուռ վարպայման: Կաթողիկէութեան նպաստաւոր ամենափոքր մէկ դէպքն իսկ անոնց շնորհ կը գրգռէ:

Օրինակի համար չեն կրնար հանդուրժել որ Հանրապետութեան նախագահը, Մ. Վիլսոն, կաթողիկէ քարտուղար մը ունենայ: Մ. Թիւմիւլթի, նախկին աշակերտ Յիսուսեանց, արդէն այս կարեւոր պաշտօնը կը վարէր Մ. Վիլսոնի քով, երբ սա դեռ Նիւ-ժէրսէյի կառավարիչ էր: Մ. Վիլսոն Մ. Նահանգաց նախագահ ընտրուելուն պէս 7000 է աւելի հեռավորներ ընդունեցաւ, որոնցմով իրմէ թախանձագին կը պահանջէին որ այլեւս իր քովէն հեռացնէ իր քարտուղարը, ըսելով թէ՝ կաթողիկէ մը Պապին իշխանութեան ենթակայ ըլլալուն համար՝ կրնայ պետութեան գաղտնիքները յայտնել ի նպաստ Հռոմի: Թիւմիւլթի այս հեռագիրները բացաւ եւ անձամբ տարաւ նորընտիր նախագահին եւ անոր ըսաւ. «Ասկէ յետոյ միակ ընելիքնիդ է զիս ձեր քովէն ըստ կարի փութով հեռացնել: Թիւմիւլթի, պատասխանեց աշխոյժով Վիլսոն, այս բողոքներու թիւը իմ առջեւ կարեւորութիւն չունի, դուք իմ քարտուղարս պիտի ըլլաք Սպիտակ Տան

մէջ»: Այսպէս ալ եղաւ: Բայց այս արիւստութեան եւ կորովամտութեան գործը չիջեցուց, բնական է, մոլեռանդներու կատաղութիւնը:

Յունուար 15ին, Ուաշինկթընի բողոքական հանդէսի մը հրատարակիչը Վիլսոն նախագահին կը դէր հետեւեալը. «Ամէն կողմ սա գաղափարը կը տիրէ թէ մենք բողոքականներս, կաթողիկէ հռոմէական եկեղեցւոյ արարքները ձեր առջեւ պարզելու բացարձակ անկարողութեան մէջ ենք. որովհետեւ Մ. Թիւմիւլթի, ձեր քարտուղարը, այս նիւթին վերաբերեալ ամէն գրութիւններ վար կը դնէ եւն»: Մ. Վիլսոն պատասխանեց. «Պատշաճ կը համարիմ ձեզի հաւաստել որ հիմովին սխալ եւ անտեղի է այն վրոյցը թէ ինծի ուղղուած գրութեանց մէկ մասը կրօնական պատճառներով, վար կը դրուի իմ քարտուղարս կողմէ: Նոյն իսկ պիտի աւելցնեմ որ ինծմէ առաջ եւ ոչ մէկ նախագահ ունեցած է իր քարտուղարին հետ այնպէս ազատ եւ գոհացուցիչ յարաբերութիւններ, ինչպէս ես ու նիմ իմինիս հետ: Ինծի ուղղուած գրութիւններ ինծի կը յանձնուին ամբողջովին: Մ. Թիւմիւլթի ամենէն աւելի իր կրօնական համոզումներուն վերաբերեալ պաշտօնաթուղթերուն վրայ իմ ուշադրութիւնս հրաւիրելու փութկոտութիւն ցոյց կու տայ: Այնչափ հարկ չեմ տեսներ աւելցնելու որ ես երբեք արտաքին ազդեցութիւններու համեմատ չեմ խօսիր, այլ ինքրին մասին ունեցած կատարեալ ծանօթութեանս համեմատ»:

Բայց այս խօսքերը չկրցան վիճաբանել բողոքականաց ատելութիւնը: Վերջերս Միթոսթիսներու մէկ հաւաքոյթին մէջ քուէարկուեցաւ բանաձեւ մը, որով վանգատ կը յայտնէին Վիլսոնի դէմ, անոր իբրեւ թէ կաթողիկէութեան նպաստաւոր միտումներուն համար, եւ միանգամայն կը բողոքէին վերստին Թիւմիւլթ «նախագահին Սպիտակ Տան մէջ ներկայութեան դէմ»:

Սակայն ասոնց բողոքներն ու մոլեռանդական արարքները բնաւ չեն ստնաներ կաթողիկէութեան որ օրէ օր յառաջ կը տանի իր յաղթական ընթացքը:

ՊԻՐ ՏԱՆԷ ԷՎԼԱՏ...

— Վելթիփօնլար գրգռող Ակաթը իսթէ-յօրլար. պուշլարըն թէքլիֆէրիինի գապուլ իտէլիմ մի — տէյօրտը մատամ Թօրի:

Միւսիւ Թօրի իտէ, պիր միւտտէթ տիււ շիւնտիւքտէն սօնրա, «Պու գրամէթ պանաֆէնա կէօրիւնմէյօր. օղլան պապասընըն, անասընըն պիր տանէսի տիր. օնլարըն հէր նէսի վարսա քէնտիսինէ գալաճաղ տըր» ճէ-վապընը վէրիւ:

Վալիտէ . «Հագիգաթէն շու պիր տանէ
էվլատ օլմասը ճիհէթի պէնիմ իչուն մուճի-
պի մէմնունիյէթ տիր . չիւնքի էվլատարը
չօգ օլանլար զահմէթտէն , եօրկունլըգտան ,
բէրիշանլըգտան պաշ ալամաղլար» տէր :

Օ կիւնտէն իթիպարէն պու իղտիվաճա
գարար վէրիլիր :

Արասը չօգ կէչմէգտէն Ֆուզլի Լաթուշտա
Օկիւսթ Վօլթիթօն վէ Ակաթ Թօրիտէն միւ-
թէշէքքիլ պիր ալիլէ տահա արթար :

* *

Այնի զէմանտա վէ երնէ աշնի պու Ֆու-
զլի Լաթուշտա Պրէնտըբայլ Ֆամիլեասը տա
պիր գարար վէրմէք իւզրէ իսթիշարէ իթ-
մէքտէ իտիլէր :

Վալիտէ գօճասընա սիւալ իտիյօրսը քի
«Գըզըմըզ Ժանէթի Լէօթօլ Թարար իլէ էվ-
լէնտիլէլիմ մի» :

Պապա իսէ , — էլպէթտէ տէրտի . Պու
զըմէթ էլտէն գաշըրըլաճազ չէյլէրտէն տէ-
յիլ տիր . Լէօթօլ Թարար զէնկին տիր . պիր
տանէճիք էվլատ օլմասը հասէպիյլէ պապա
վէ անանըն պիւթիւն սէրլէթի քէնտիսինէ
գալաճազ տրր . Ամուճասը Արման Պէնիսի-
նին տէ էվլատը օլմատըղընտան , ծնուն մի-
րասընը տա քէնտիսի եէյէճէք տիր . Զաթէն
քիւչիւք գըզըմըզ Մարկիրիթին վէֆաթընտան
սօնրա Ժանէթ տէ պիղիմ եէկեանէ էվլա-
տըմըզ օլտուղընտան , պիղիմ զէնկինիյիմիզ
տէ հէք պունա գալաճազ տրր :

— Շու հալտէ իսթիգալլէրիտէն գօր-
գաճազ պիր չէյ եօզ տրր :

Պինաէն ալէյի գըզլարընը Լէօթօլ Թարար
իլէ էվլէնտիլէյէ գարար վէրիլլէր :

Պէօյլէճէ Ֆուզլի Լաթուշտա Լէօթօլ Թա-
րար վէ Ժանէթ Պրէնտըբայլըն թէշէքիլ իթ-
միշ օլտուղը իքիսնի պիր ալիլէ տահա ար-
թար :

* *

Պու եէնի ալիլէլէր տէ տիկէրլէրի կիպի
իմրարը հայաթ իթմէքտէ իտիլէր :

Թարար Պրէնտըբայլըն խանէսինտէ իւ-
միտտէն պահա օլունմագտա իտի :

Վօլթիթօն Թօրիսին խանէսինտէ տէ իւ-
միտտէն պահա օլունույօրտը :

Կիւնիւն պիրինտէ Ժանէթ Թարար տիւն-
եայա պիր էվլատ կէթիրտի քի իսմինի
Վիքթօր . . . գօյտուլար :

Պիր գաշ հաֆթա սօնրա Վօլթիթօնլարըն
տա կիւզէլ , սէյիմի պիր գըզը օլտու քի
ծնուն տա իսմինի Ժէրմէն չաղըրտըլար :

Պունըն իւզէրինէ իքի Թարաֆըն ֆիք-
րինէ չէօյլէ պիր միւլահաղա կէլտի :

— Օլապիլիր քի պու իքի չօճուզլար ի-
լէրուտէ պիրպիրինի ալըրլար :

Մա մաֆիյի պու ֆիքրի թաշըյանլար
պիլէ շու կիպի պիր գայտ իլավէ իտիյօր-
լարտը քի :

— Պու օղլան վէ պու գըզըն պիրիպի-
րիլէ էվլէնմէսի գապիլ օլապիլմէք իչիւն ,
քէնտիլէրինտէն սօնրա պաշգա չօճուզ տօղ-
մամալը տրր :

Հագիգաթէն տէ սէնէլէր կէչտի հիշ պիր
եէնի էվլատ տիւնեայա կէլմէտի . . . :

* *

Չօճուզլար քէյֆլի սուրէթտէ պէօյիւ-
մէքտէ իտիլէր

Օնլարըն պէօյլէ նուշ ու նիւվազիշ ի-
չինտէ իմրարը հայաթ իթմէլէրինի կէօրէն-
լէր հալլէրինէ զըպթէ իտէրլէրտի :

Իլէրուտէ պունլարըն մալիք օլաճազլարը
սէրվլթի հիսապ իտէրլէրտի . . . :

Պիրի օ պիրինին արգասը սըրա պէօյիւք
պապալարըն էօլտիւլէր . Ամուճա Արման Պէ-
նինի տախի վէֆաթ իթտի :

Իւզէրլէրինէ թիթրէնիլէն օ իքի չօճուզ-
լարըն ալիլէլէրի հիշ պիր գահմէթ չէքմէք-
սիղին պիր չօգ բարա սահիսլի օլտուլար . . .
խայլի արազի սաթըն ալտըլար . . . քէօյիւն
իչինտէ ագարաթ ետըրըրտըլար . . . :

Սէնէտէն սէնէյէ հէր իքի Թարաֆ տախի
օ իքի քիւչիւք օղլան վէ գըզըն նասիպինէ
պանքալարա բարա գօրլարտը :

* *

Կիւնիւն պիրինտէ Միւսիւ վէ Մատամ
Թարար Միւսիւ վէ Մատամ Մատամ Վօլ-
թիթօնա կիտէրլէր :

— Օղլուճըզ Վիքթօրա գըզընըզ Մատ-

մազէլ ժէրմէնի իսթէմէյէ կէլտիք, տէրլէր :
վէ

— Սիզին պու արզունըզա միւլաֆէգաթ
իթմէք պիզիմ իչիւն տէ մուճիպի մէմնունի-
յէթ տիր, ճէվապը ալըրլար :

Պունըն իւզէրինէ Ծուշի լա թուշ նահի-
յէսինտէ եէնի պիր ալիլէ տահա արթոր :
Ճագաթ պու ալիլէնին գօնաղը քէօյիւն էն
միւքէմէլ պինասը իտի . էշհայը պէյթիյէ-
լէրի նէֆիս, սալօնլարը մունթազամ վէ
միւզէյէն պիր խանէ պունլարա իգամէթ-
կհահ օլմագտա իտի :

* *

Սաստէթլի պիր հայաթ իլէ հաշամագտո
իտիլէր, էվլատ իւմիսլէրի թէճէլի իթմէյէ
պաշլատը : Վագթը մէրնունընտա Մատամ
Վիքթօր Թարար տիւնեայա պիր էրքէք էվ-
լատ կէթիւրտի քի իամինի Վիքթօր ժէրմէն
թէճմիյէ իթտիլէր :

Զօճուգ պէօյիւք պիր ինթիմամլէ պէօ-
յիւտիւլմէքտէ իտի . . . բէտէր վալիտէ ա-
տէթա իւզէրինէ տիթրէրլէր իտի . . . չիւնքի
պու յօճուգ քէնտի իւզէրինտէ Թօրի, Պէ-
նինի, Պրէնտրբայլ, Վօլթիօն վէ Թարար
ալիլէլէրինի թէմիլ իթմէքտէ իտի :

Պէրէքէթ վէրսին քի էրքէք էվլատ օլ-
տուղընտան, պալատէ մէզքիւր իտիլէրտէն
պիրինէ սահիպ օլապիլիլէրտի :

(Մապաթի վաւ)

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՀՈՌՄ ԵՒ ԿԱԹՈՂԻԿԷ ԱՇԽԱՐՀ. — Գոյնիայի
մետրապոլական գաւառին ուխտաւորները Գաճա-
սրահին մէջ ընդունուեցան Արքայան Քաջանայապե-
տին կողմէ : Հէճինկ Գերապոյծառը, յանուն նոյն
մետրապոլական գաւառին Ն. Արքեպիսկոպոսի նուիրից
ճրի ընծայ մը իբրեւ յուսոյ Սուրբ Պետրոսի :

Արքայան Քաջանայապետը ուխտաւորներուն
ուղղեց համառօտ բանախօսութիւն մը, զոր Պաէն-
նի Գերապոյծառը գերմաներէնի թարգմանեց և
բացատրեց ուխտաւորներու երեք խումբերուն :

Ուխտաւորները մեկնելէ առաջ հնչեցուցին Զեկ
Աստուածը :

Քաջանայապետական ունկնդրութենէն յետոյ
ամէնքը գացին Վսեմ. Պետական-Քարտուղարին յար-
կաբաժինը. ուր Մէրի Տէլ Վալ կարգինալին կողմէ

ժառաւար ընդունելութիւն մը գտան : Ն. Վսեմ. Տէ-
րութիւնը մեծ գովեստով խօսեցաւ գերմանացի և
պիսկոսներուն կատարած գերին վրայ :

* Վիեննայի Ս. Միքայէլի աւստրիական եղ-
բայրութեան անգամներէն 134 հոգի Ս. Քաջանայա-
պետին ունկնդրութեան ընդունուեցան :

* Աւստրիոյ Ակրամ քաղաքին Արքեպիսկոպոս
Բոսկովիչ Գերապոյծառը վախճանեցու՝ մեծ սուգի
մէջ թողով Եկեղեցին : Հանգուցեալը ծնած է Խըռ-
ուաթիոյ մէջ 1834ին. մեռնելէն երկու օր առաջ
կատարած է իր ծննդեան 80 տնակը :

* Հալալքոյական միջազգային Ընկերութեան
ուխտաւորները Ս. Քաջանայապետին ուղերձ մը մա-
տուցին : Յանուն Ն. Արքեպիսկոպոսի, Վսեմ. Մէրի Տէլ
Վալ կարգինալը ոչ ոք ուղերձին պատասխանը ուղղեց
նոյն Ընկերութեան Նախագահին :

Արքայան Քաջանայապետը կը շնորհաւորէ Նա-
խագահը՝ անոր քաջակորով խաչակրութեան համար,
որ կը հիմնուի Աւետարանին վրայ, և կ'առաջնորդուի
Նուիրապետութեան կողմէ : Կը յիշէ ինչ որ մինչեւ
հիմայ քած են ալքալաթութեան դէմ՝ Քաջանա-
յապետները և կ'պիսկոպոսները, կը շնորհէ աղէտին
ահաւիրութիւնը, և Ընկերութեան կը մաղթէ լիա-
կատար յաջողութիւն :

* Ինչպէս Եւրոպական Կ. թերթերը կը գրեն
Ս. Քաջանայապետը որոշեց որ կարգինալական Ժո-
ղով տեղի ունենայ Մայիս 25 և 28ին : Ն. Արքե-
պիսկոպոսը 13 նոր կարգինալ պիտի անուանէ :

Արհի. Արհի. Արքեպ. Արքեպ. Լիոնի / Պէժէն /
Արքեպ. Քէպէքի, Տէլա Քիւլա / Արքեպ. Պոլսիայի /
Հարթման / Արքեպ. Գոլոնիայի / Քիթլ / Արքեպ. Վիեն-
նայի, և Թուրքիոյ / Սթամբուլի / և Միւնիխի / արքե-
պիսկոպոսները, և Գեր. Գեր. Արքեպիսկոպոսի /
Լէվալ / Թէքքի / Տոն կապէ / որոնք Հռոմի պիւնեալ
բարձրագոյն ժողովներուն պաշտօններէն են :

ՀԱՅ-ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԽԱՆ. — Մայիս
ամսուան ջերմեանդութիւնները մեծ բարեպաշտու-
թեամբ կը կատարուին աւագ թեմի եկեղեցիներուն
մէջ :

* Անարատ Յղութեան կարգին Մայր Վանա-
տան սրահին մէջ Մայիս 7ին տեղի ունեցաւ թա-
տերական գեղեցիկ հանդէս մը նախաձեռնութեամբ
նոյն հաստատութեան նախկին աշակերտուհիներու :

ՆԵՐՔԻՆ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ. — Նոր-
վելիացի գնդ. Հաֆթ և Հոլանտացի Մ. Վէսթէնէք,
որ Արեւելեան Անատոլիոյ բարեհորդմանց վերահս-
կիչ կարգուած են, Մայիս 3ին Կ. Պոլսի ժամանեցին
Արեւելեան ճեպընթացով. Եւրոպոսական քարտու-
ղար—Թարգման Էսապ պէյ կայսրսինին մէջ ընդու-
նելով զանոնք՝ բարի գալուստ մաղթեց օմմ. կառա-
յալութեան անունով :

— Նորվեկիացի Գնդ. Հաֆթ ու Հոլանտացի Մ. Վեթենէք Մայիսին Բ. Գուռ երթալով տեսակցեցան Եպարքոսին ու Ներքին գործոց նախարարին հետ Գերմանիոյ ու Հոլանտայի դեսպանատանց թարգմանները, որ անոնցմէ առաջ Բ. Գուռ ժամանած էին, զանոնք ներկայացուցին Եպարքոսին ու Ներքին գործոց նախարարին Վերահսկողները նաև այցելութիւն տուին ուրիշ քանի մը նախարարներու և դեսպաններէ ոմանց,

— Կ'ըսուի թէ վերահսկողներն իրենց անուանումը պաշտօնաթերթին մէջ հրատարակուելէ ետքն է որ կայսեր պիտի ներկայանան խորհրդարանը երբ բացուի, բարենորոգմանց վերահսկողներու իրաւասութեանց վերաբերող առժամեայ օրէնքը պիտի մուծուի: Անմիջապէս յետոյ Գնդ. Հաֆթ ու Մ. Վեթենէք իրենց պաշտօնատեղերը պիտի ուղեւորին: Կայսեր կողմէ ընդունուելէ ետք, վերահսկողները մեծ տերութեանց դեսպաններուն ալ պիտի ներկայանան:

— Թաւաթի Էմբար կ'ըսէ թէ վերահսկողներէն մէկը խորհրդի մէջ պիտի հաստատուի և միւսն ալ Տրապիզոն: Էմբարական նախարարութիւնն որոշեց որ այդ երկու նահանգներու կեդրոններուն մէջ Ա. աստիճանի ելմտական մէջ մէկ քննիչ գտնուին:

• Բ. Գուռը Մեծ Տէրութեանց դեսպաններուն յանձնեց Մակեդոնիոյ իսլամներուն կացութեան մասին յիշատակագիր մը. ասոր մէջ մանրամասնօրէն բացատրուած է յիշեալ իսլամներուն անհանդուրժելի վիճակը, որուն հետեւանքով 1912 Նոյեմբերէն ի վեր 163,000 չափ իսլամներ գաղթած են Հելլէն հողերէն:

• Թրակիոյ Յոյներուն վիճակը օրէ օր աւելի գոհացուցիչ կերպարանք մը կ'առնուի:

• Գերման կայսրը, իրեն և կարգադրութեան միջոց, առաջարկեր է որ Քիոսի ու Միտիլիի Եփեսոսի նման վարչութիւն մը տրուի և օսմ. կառավարութիւնը նուիրակներ զրկէ: Զինուորական դժք տեղացիներէ կազմուի: Տուրքերուն մէկ մասն օսմ. կառավարութեան տրուի: Քաղաքապահներու սպանելը հեղինակուի: Ընդհ. կառավարիչը յոյն բլաշ և Բ. Դրան կողմէ կարգուի: Սակայն կ'ըսուի որ թէ Թուրքիա և թէ Յունաստան մեքթեր են այս առաջարկը:

• Լիման Ծոն Զանտէրս փաշա Ետրաթ օր Պերլին ուղեւորեցաւ:

• Երեսփ. Ժողովին նիստը Մայիսին բացուելով երկու ամիս պիտի տևէ և Բումադանի առթիւ պիտի դադրի:

• Մայիսին Կին երեսփոխաններէ ոմանք Խորհրդարան երթալով գումարուեցան և զիրար ճանչցան: Հիմա Կ. Պոլիս գտնուող երեսփոխաններուն թիւն է 460:

• Բաղէշէ կը հեռագրուի. — «Վերջին դէպքէն ի վեր զինուորական ոյժն երթալով կ'աւելնայ քաղաքի մէջ, թէ՛ Բաղէշէն և թէ՛ Խիզանէն 1,500 չափ զօրք ալ՝ Խիզան և ապստամբներու կեդրոնները լեցուած, կը հետապնդեն խռովարարները, որոնք փախուստ տուած են: Զինք դիտեր թէ ապստամբները պարտուելով կ'աշխատին օրէնքէն ազատիլ, թէ ոչ դարձեալ թագուն կերպով կը պատրաստուին կռիւ մղելու: Առայժմ հանդարտութիւն կը տիրէ թէ՛ քաղաքին և թէ՛ գիւղերուն մէջ: Երկու օր առաջ Սէյիտ Սյին, իր զաւակը Սալահէտտինի, Զադի Խալիլի, Խօրօրացի Ատէի որդի Խուրշիտի և ուրիշ քանի մը աննշան Քիւրտերու հետ ձերբակալուելով քաղաքս բերուեցան: Մօլլա Սէյիմ տակաւին Ռուս հիւպատոսներ կը մնայ: Գիւղերու մէջ Բրաւիճիներ Հայերու ճուղներ կ'ապաստանին՝ ճայկական կանացի օտարացիներով: Մեծ փառնքը անցուցինք, կը յուսանք որ ալլեւս չպիտի կրկնուի Պատերազմական ատեանը կազմուեցաւ և գործի պիտի ձեռնարկէ:»

• Օղանաւորդ Սալիմ ու Քէմալ պէշերը, որ Պէրլէթէն Երուսաղէմ գացած էին, Էլ—Արիժ Ժամանեք են: Եփեսոսի մէջ մեծ պատրաստութիւններ կը տեսնուին զանոնք ընդունելու համար:

• Ելմտական նախարարութիւնն հրատարակեց վիճակագրութիւն մը ուրկէ կ'երեւայ թէ Փետր. 28ին վերջացող ելմտական տարուան հասոյթներուն ընդհ. գումարն է 29,927,000 ոսկի՝ նախորդ 1328 տարին 728,000 աւելի: Սակայն այս վերջին բանականութիւնն իրական յաւելումը ցոյց չի տար. որ աւելի է 934,500 ոսկի: Արդարեւ երբ իւրաքանչիւր տարուան հաշիւները ճշդուին, 1328ին գոյութիւն չունեցած պատերազմի տուրքն և այլն և 1328ին Բուսթիլի նահանգներուն հասոյթները մինչեւ պատերազմի յայտարարութիւնը զիջելով, այդ պարագային իւրաքանչիւր տարուան ճիշդ հաշիւը կը հաստատուի և, ինչպէս վերն ըսուեցաւ, 1329ի հասոյթներու յաւելումը կը հասնի 9՝ 4,500 ոսկի:

• Կ. Պոլսոյ մէջ 1917ին տիեզերական արուեստահանդէս մը կազմակերպուեւ ծրագիրը, որ վերջին պատերազմներուն հետեւանքով լքուած էր, վերստին կ'ուստմնասիրուի:

• Պոլիս այցելող Սպանիացի Օրլէանի իշխանն ու իշխանուհին Մայիս 3ին Կայսեր ներկայացան: Նոյն օրը Կէսօրին ռուս դեսպանատունը ճաշեցին և նոյն դեսպանատան պահականաւով պտոյտ մը կատարեցին Վոսփորի մէջ: Գիշերը Ռուսմանիոյ դեսպանատան մէջ ճաշեցին: Մայիսին Բարիդ ուղեւորեցան Արեւելեան ճեպընթացով:

• Ելմտ. նախարարութիւնը պատրաստեց ցուցակ մը ուր նշանակուած են, 1327 տարուան հաշիւներուն նայելով, Պալքանեան Պետութեանց իւրաքանչիւրին օսմանեան հանր. պարտքէն և երբեք պարտքերէն ունեցած բաժինը: Աւասիկ գումարները. — Պուլկարիա՝ 4,073,590 ոսկի, Յունաստան՝ 14 միլիոն 345,406, Սերպիա՝ 4,454,473, Ալպանիա՝ 4 միլիոն 999,685 և Սեւ Լեւ՝ 451,040. գումար 24,093,494 ոսկի: Յուցակէն յիսուն օրինակ Զրահապետ զրկուեցաւ,

Բարիզի եղմտական ժողովին օտար տէրութեանց պատուիրակներուն բաշխուելու համար:

✧ Իրլանտական խնդրոյն սկիզբէն ի վեր կայուն թիւնն օրըստօրէ կը փոխուի աշխարհի արագութեամբ որ գտնար է գուշակել թէ տագնապն ե՛րբ և ի՛նչ պէ՞տ պիտի վերջանայ: Քանի մը օր առաջ ամէն բան կտրուած կը թուէր: Այսօր ամէն բան կարգադրուած կ'երեւայ: Անշուշտ խիստ վտանգաւոր է այժմ անորդ լաւատեսութեան յարկ անվերապա՜հ կերպով: Անվիճելի է սակայն թէ Քրքրակի քեպքերը, կարգ մը սպաններու ըլսթերի դէմ զինուորական գործողութեան չմանակցելը և անգլ. պաշտօնեաներու աչքին առջև 30,000 մաւզերի ցամաք հանուելը որ, տեղի ունեցաւ վերջերս, կացութիւնը բաւական լուսաբանեցին:

✧ Իշխան Վիտ կալմուկերպութեան ծրագիր մը պատրաստեց որ տասը տարուան համար գործադրելի պիտի ըլլայ: Մրադիրը երկու մասի կը բաժնէ երկիւրը, մին՝ հիւսիսային ու կեդր. Ալպանիա և միւսը՝ Եպիրոս: Վիեննացի Տքթ. Կալմանի առաջարկին համաձայն, Ալպանիոյ երկու մասերուն իւրաքանչիւրը մէյմէկ Խորհուրդ պիտի ունենայ Տուրացցոյի մէջ՝ օրէնսդրական, վարչական ու դատարար հանգամանքով: Ասոնք միանալով պիտի կազմեն Պետական Խորհուրդը՝ արտաքին, զինուորական ու եղմտական գործերու համար: Կառավարական վերին իշխանութիւնը պիտի վարէ պատերազմական նախարարը որ պաշտօնատարները պիտի անուանէ և զաւառային Խորհուրդներուն գործառնութեանց վրայ հակակշիւ պիտի կատարէ: Երկու Խորհուրդներուն իւրաքանչիւրէն երկու քական անդամ պիտի գտնուին Դաշինքին մէջ՝ իրիւս անպաշտօն նախարար, բայց քուէի իրաւունքով: Տէրութիւնները պիտի հաւանին այս կազմակերպութեան, զոր Յունաստան պիտի ստորագրէ և իրաւունք պիտի ունենայ բողոքելու, երբ անոր արամտորութիւնները չգործադրուին: Մրագիրը նաեւ կրօնական ու դպրոցական ա-

դատութիւն մը կ'ապահովէ Քուցօ-Վալաքներուն համար:

✧ Մեքսիկայի մասին միջնորդող տէրութեանց ջանքերը առաջ կը տարուին: Զինագաղարը կասեցուց թըշնամութիւնները Մ. Նահանգաց. ու Մեքսիկայի միւեւ, բայց ո՛չ թէ Մեքսիկայի երկու հակառակ կուսակցութեանց միջեւ: Ապստամբները դիւրաւ պիտի չլինան ընդունել զինագաղարը, վասն զի իրենց եւռանդը պիտի կասեցնէ: Քաղաքային պատերազմին շարունակութիւնը մեծապէս կը նեղէ միջնորդողները, որոնց ծրագիրն է, երբ զինագաղարն ամենուն կողմէ ընդունուի, ձեռնարկել Մ. Նահանգաց. Զօր. Հուէրութայի եւ Զօր. Քարանցայի կողմէ պատուիրակներուն անուանման՝ հաշտութեան յանձնաժողով մը կազմելու համար: Այս վերջինին պաշտօնը պիտի ըլլայ առժամաբար հեռացնել երկու կուսակցայեաները՝ պատուաւոր նահանջ մը որոշել Զօր. Հուէրութայի համար, ու կազմել կառավարական Խորհուրդ մը, որ Մեքսիկայի սահմանադրական իշխանութեանց վերակազմութիւնը կատարէ՝ բոլոր կուսակցութիւնները հաշտեցնելով:

✧ Սեւ Մով գտնուող տասներկու Հելլէն շոգեւորներ իրենց տէրերէն հրաման ստացան Պիրէոն վերագառնալու, որով ծամբայ էլան դէպի հոն:

— Հելլէն Մարկարիքա շոգեւորը, որ Իզմիրէն Կ. Պոլիս պիտի ժամանէր, հրաման ստացաւ իր ապրանքները օտար շոգեւոր մը փոխադրելէ ետքը Պիրէոն վերագառնալ:

— Սելանիկի իշխանութիւնները հրամայեցին ածուխի բոլոր մթերանոցներուն տէրերուն որ բոլոր ածուխները պահեն կառավարութեան համար:

— Աթէնքի լրագիրները կ'ըսեն թէ Հելլէն կառավարութիւնը որոշեր է 4,500 թոննոց երկու թորփիլահայլածներ գնել պատրաստ շինուած: Ասոնք ունին 35 միոն արագութիւն և 42 սանդիմ արամագծով թնդանթներ:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Դէպքեր եւ սկզբունքներ	289
Յիսուս Քրիստոս	292
Նամակ առ Աղեքսանդր Կաթողիկոս	294
Եօթնակ Քրիստոնէի	296
Ս. Հաղորդութեան վարդապետութիւնը	297
Այլեւայլք	299
Պիւր օսնէ Էվլաս	300
Տեղեկագրական	302

ԱՐՏՕՐԱՏԵՐ

ՅՈՎԶ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏՆՕՐԷՆ-ԽՄԱՒԱԳՐԱԴԵՏ

ԳԷՈՐԳ Ծ. Վ. ԹԵՐԶԻՊԱՇԵԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ .— Թուրքոյ համար տա-
րեկան՝ 40 դէկ. արծ. վեցամսեայ՝ 20 .— մէկ թիւ՝ 1 դէկ. .— Արսասան-
ման տար. ֆր. 10. վեցամս. 5 .— Վճարմունք կանխիկ են . .

ՀԱՍՏԷ .— Կաթողիկէ Արձագանգ, Բերա, 5. Պայրաւ փողոց 5, 4 .

Պոլիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ. — 1. — Արձագանգ կը հրատարակուի
Շաբաթ օրերը: 2. — Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ ան-
պատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն զրկուած ու է
յօդուած: 3. — Կեղծանունով զրկուած յօդուածներու հեղինակը
կը պարտի իր իսկական անունը ծանուցանել Խմբագրապետին:
4. — Ձեռագիրները եւ չեն դարձուիր: Յօդուածներու 5. —
ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուղթին մէկ կողմը մի-
այն: 6. — Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք
կը կատարուին: 7. — Հասցէի փոփոխութեան համար պէտք է
անհրաժեշտ երկու դահեկանի նամակագրոյժ ի սխալին զրկել:

Տարր. Սկզբունք Քրիստո. Վարդապետութեան. գին 2 դէկն.:

Տէր Կոմիտաս Քահանային վարքը. գին 5 դէկն.:

ՏԱՐԱՆ Կաթողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրաւ փ. 5: Տպարանս ըստ՝ամենայ-
նի ճոխ, և ի վիճակի է որ և իցէ տպագրական գործոց համար: Կը տպուին ամեն տե-
սակ ծանուցմունք, գիրքեր, տետրներ, հրաւիրագիրներ, քարտեր, քարդ-ատրէաներ,
մահազգներ, եւն. եւն.: Գիները անմեղքի կերպով աժան են: Գեղեցկագիտական ճա-
շակի և տպագրական մաքրութեան կողմէ յաճախորդները անտարակոյս գոհ պիտի
ընան:

WIENER BANK-VEREIN

FONDÉ EN 1869

Capital entièrement versé 150.000.000 de couronnes

Réserves: 49.000.000

SIÈGE CENTRAL:
VIENNE I. Schottenring

SUCCURSALES:

EN AUTRICHE-HONGRIE: Agram, Aussig, Bielitz-Biala, Bozen, Bruenn, Budapest, Budweis, Czernowitz, Drohobycz, Friedek-Mistek, Graz, Innsbruck, Jaegerndorf, Karlsbad, Klagenfurt, Krakau, Lemberg, Marienbad, Merah, Oest, Nowosielitza, Pardubitz, Pilsen, Prag, Prosnitz, Przemysl, Salzburg, St. Poelten, Stanislaw, Tarnopol, Tarnow, Teplitz, Teschen, Villach, Wr. Neustadt, Zwittau.

EN TURQUIE: Constantinople et Smyrne.

SUCCURSALE DE CONSTANTINOPLE

Siège à Galata, Place du Pont de Karakouy
Agences à Stamboul, Péra et Scatari.

Le Wiener Bank-Werein fait toutes opérations de Banque et notamment :

Avances en Compte-Courant contre dépôt des titres, effets de commerce ou marchandises;

Escompte d'effets de commerce;

Achat et vente de change sur l'Etranger;

Emission de lettres de crédit et ouverture d'accreditifs simples et documentaires;

Paiements télégraphiques en Turquie et à l'Etranger;

Encaissement d'effets, de coupons, d'obligations amorties ou favorisées aux tirages;

Exécution d'ordres de Bourse sur place et à l'Etranger;

Ouverture de Comptes-Chèques et de comptes-dépôts à intérêt;

Garde de titres, marchandises etc.

Achat et vente de monnaies diverses, matières précieuses, monnaies d'ornements;

Caisse d'Epargne à 3. $\frac{1}{2}$ % d'intérêt.

Location de coffre-fort (à Galata et à Stamboul).

UN BUREAU DE VOYAGE (Représentant des Chemins de fer de l'Etat Autrichien) est attaché à l'Agence de Péra et délivre des billets pour tout l'Univers. Les voyageurs y trouveront toutes facilités possibles et tous renseignements désirés.